ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ օտար լեզուների ֆակուլտետի խորհրդի

28.08.2020 Ã. N 1 ԱՌՅԱՆՑ ÜÆê îÆ

1. Ֆակուլտետի 2020-2021 ուստարվա աշխատանքային պլանի հաստատում:

2. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների քննարկում :

3. Ուսումնական գործընթացի (հիբրիդային) կազմակերպման և անցկացման մասին:

4. Դասաբաշխում / զեկուցողներ՝ ամբիոնի վարիչներ/:

5. Ընթացիկ հարցեր:

1.ԼՍԵՑԻՆ – Ֆակուլտետի 2020-2021 ուստարվա աշխատանքային պլանի հաստատում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ –դեկան Սրբուհի Լուլուկյանը:

Լուլուկյանը ներկայացրեց 2020-2021 ուստարվա ՕԼ ֆակուլտետի աշխատանքային պլանը:

ՈՐՈՇԵՑԻՆ — (միաձայն) Հաստատել 2020-2021 ուստարվա ՕԼ ֆակուլտետի աշխատանքային պլանը:

2.ԼՍԵՑԻՆ – Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների քննարկում :

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- դեկան Ս. Լուլուկյանը, Ն.·.[1], Նաիրա Դալյանը, բ.գ.դ, պրոֆեսոր Թադևոսյանը, բ.գ.թ., դոցենտ Տ. Միքայելյանը:

Լուլուկյանը ներկայացրեց որոշ խորհուրդներ, մասնավորապես՝

- մագիստրոսական թեզերի թեմաների ձևավորում հաշվի առնելով դպրոցի խնդիրները, ապահովելով քանակային և որակական մեթոդների ամբողջությունը:
- մեթոդական գլուխը լինի ամբողջական:

ՈՐՈՇԵՑԻՆ — (միաձայն) Հաշվի առնել նկատառումները և մինչև սեպտեմբերի 22-ը ներկայացնել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաները:

3. ԼՍԵՑԻՆ – Ուսումնական գործընթացի (հիբրիդային) կազմակերպման և անցկացման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – դեկան Ս. Լուլուկյանը, Ն.·.[1], Նաիրա Դալյանը, բ.գ.դ, պրոֆեսոր Թադևոսյանը, բ.գ.թ., դոցենտ Տ. Միքայելյանը:

Լուլուկյանը ներկայացրեց ՀՊՄՀ –ի մոտեցումը, ըստ որի 1-ին կուրսերի գործնական դասերը տեղի են ունենալու առերես, դասախոսությունները՝ առցանց, մյուս բոլոր կուրսերի վերաբերյալ կտրվի հավելյալ տեղեկություն:

ՈՐՈՇԵՑԻՆ — (միաձայն) ընդունել ի գիտություն:

4. ԼՍԵՑԻՆ – Դասաբաշխում / զեկուցողներ՝ ամբիոնի վարիչներ/:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – բ.գ.դ, պրոֆեսոր Թադևոսյանը, մ.գ.դ,պրոֆեսորի պ/կ., ամբ.վարիչ Ն. Դալյանը, բ.գ.թ., դոցենտ Միքայելյանը:

Ամբիոնի վարիչները տեղեկացրեցին, որ արդեն իսկ պատրաստ են դասաբաշխումները:

ՈՐՈՇԵՑԻՆ — (միաձայն) ընդունել ի գիտություն:
Ընթացիկ հարցեր:

5.1ԼՍԵՑԻՆ – «Մոսկվայի քաղաքապետի» կրթաթոշակի ներկայացման հարցը:

Առաջադրվեցին «Ռուսաց լեզու և գրականություն» մասնագիտության հետևյալ գերազանց առաջադիմությամբ ուսանողները՝

Լաուրա Վիտյայի Մնացականյան– 3-րդ կուրս, ՄՈԳ 95.11

Անահիտ Գեղամի Գալոյան – 4-րդ կուրս, ՄՈԳ 96.8

ՈՐՈՇԵՑԻՆ — (միաձայն) Երաշխավորել Լաուրա Վիտյայի Մնացականյանի և Անահիտ Գեղամի Գալոյանի թեկնածությունները՝ որպես «Մոսկվայի քաղաքապետի» կրթաթոշակի շահառուներ:

5.2 ԼՍԵՑԻՆ –Պրակտիկաների պատասխանատուների, դրանց կազմակերպման և անցկացման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – – բ.գ.դ, պրոֆեսոր Թադևոսյանը, մ.գ.դ,պրոֆեսորի պ/կ., ամբ.վարիչ Ն. Դալյանը, բ.գ.թ., դոցենտ Միքայելյանը, մ.գ.թ., դոցենտ, դեկան Լուլուկյանը, ուսանողներ:

Տ. Միքայելյանը առաջարկեց հրավիրել մեթոդխորհրդի նիստ, որտեղ կքննարկվեն պրակտիկային առնչվող հարցերը, որոնք առաջ են եկել համաձարակի հետևանքով:

ՈՐՈՇԵՑԻՆ — (միաձայն) խնդրել մ.գ.դ. պրոֆեսոր Մ. Աստվածատրյանին հրավիրել մեթոդխորհրդի նիստ պրակտիկայի կազմակերպչական և անցկացման հարցերը քննարկելու համար:

«Ռուսաց լեզու և գրականություն» բաժնի պրակտիկայի պատասխանատու նշանակել Բելլա Այունցին:
«Անգլերեն լեզու և գրականություն», «Գերմաներեն լեզու և գրականություն», «Իսպաներեն լեզու և գրականություն» բաժինների պրակտիկայի պատասխանատու նշանակել Մելանյա Աստվածատրյանին:

ÜÆê îÆ Ü ² Ê ² ¶ ²Ð‘ ԼՈՒԼՈՒԿՅԱՆ Ս.Վ.

ÜÆê îÆ ø ² ð î àôÔ ² ð‘ ՍԱՀԱԿՅԱՆ Ա. Մ.

28.08. 2020թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ օտար լեզուների ֆակուլտետի խորհրդի

28.09.2020 Ã. N2 **ԱՌՅԱՆՑ** ÜÆê î Æ

1 . Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների հաստատում:
2. Առցանց և առերես դասապրոցեսի վերաբերյալ :
3. Պրակտիկայի վերաբերյալ / զեկուցողներ՝ պրակտիկայի ղեկավարներ/:
4. Ընթացիկ հարցեր:

1.ԼՍԵՑԻՆ – Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների հաստատում :

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- դեկան Ս. Լուլուկյանը, Ն.·.[1], Նաիրա Դալյանը, բ.գ.դ, պրոֆեսոր Թադևոսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ — (միաձայն) Հաստատել օտար լեզուների ֆակուլտետի 2020-2021 թվականի ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաները:

2. ԼՍԵՑԻՆ – Առցանց և առերես դասապրոցեսի վերաբերյալ :

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – դեկան Ս. Լուլուկյանը:

Լուլուկյանը ներկայացրեց ՕԼՖ–ի մոտեցումը, ըստ որի 1-ին կուրսերի գործնական դասերը տեղի են ունենում առերես, դասախոսությունները՝ առցանց: Իսպանական բաժինը և Ռուսաց լեզու բաժինը անցել են ամբողջովին առցանց ուսուցման:

ՈՐՈՇԵՑԻՆ — (միաձայն) ընդունել ի գիտություն:

3. ԼՍԵՑԻՆ – Պրակտիկայի վերաբերյալ / զեկուցողներ՝ պրակտիկայի ղեկավարներ/:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – դեկան Ս. Լուլուկյանը, մ.գ.դ., պրոֆեսոր Աստվածատրյանը, մեթոդիստներ՝ Ալինա Եղիազարյան, Բելլա Այունց:

Աստվածատրյանը հայտնեց, որ սեպտեմբերի 16-ին հրավիրվել է մեթոդխորհրդի նիստ, որի ընթացքում քննարկվել են պրակտիկային առնչվող հարցեր:

Լուլուկյանը ներկայացրեց , որ գերմանական բաժնի պրակտիկան անցնելու է «Փոքրիկ իշխան» դպրոցում:

Անգլիական բաժնի ուսանողները կիրականացնեն իրենց դասերը «Էռնեկյան դպրոցում», շաբաթական 4 ուսանող/ առցանց/:

Տիկին Շահիրյանը հայտնեց, որ պրակտիկայի վարչությունը արդեն տրամադրել է թղթապանակները:

Բելլա Այունցը ներկայացրեց Ռուսաց լեզվի բաժնի պրակտիկայի անցկացման ձևաչափը, այն է՝ առցանց:

ՈՐՈՇԵՑԻՆ — (միաձայն) ընդունել ի գիտություն:

Ընթացիկ հարցեր:

4.1 ԼՍԵՑԻՆ – Ռուսաց լեզվի և դրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու Էվելինա Ամատունու Բայաթյանի՝ գիտական թեզեր ղեկավարելու երաշխավորման հարցը:
ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – դեկան Ս. Լուլուկյանը, Ù.·.¹, Նաիրա Դալյանը, բ.գ.դ, պրոֆեսոր Թադևոսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ — (միաձայն) Երաշխավորել ռուսաց լեզվի և դրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու Էվելինա Ամատունու Բայաթյանին ղեկավարել գիտական թեզեր /ԺԳ.00.02 – «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (ռուսաց լեզու)/:

4.2 ԼՍԵՑԻՆ – Դասալսումների վերաբերյալ:
ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – դեկան Ս. Լուլուկյանը:

Դեկանը խնդրեց ներկայացնել ամբիոնի վարիչի կողմից անցկացվելիք, ինչպես նաև փոխադարձ դասալսումների գրաֆիկը:

ՈՐՈՇԵՑԻՆ — (միաձայն) մինչև հոկտեմբերի1-ը ներկայացնել ամբիոնի վարիչի կողմից անցկացվելիք, ինչպես նաև փոխադարձ դասալսումների գրաֆիկները:

4.3 ԼՍԵՑԻՆ – Առցանց հարթակում տեղ գտած բացթողումների վերաբերյալ:
ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – դեկան Ս. Լուլուկյանը:

Դեկանը փաստեց, որ գրեթե բոլոր դասախոսները տեղադրել են առարկայական նկարագրերը և տրոհումները, միջանկյալների նմուշները: Սակայն կան դասախոսներ, որոնք դեռ չեն տեղադրել միջանկյալները, ուստի խնդրեց տեղադրել դրանք, ևս մեկ անգամ ստուգել ամբողջական փաթեթի առկայությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ — (միաձայն) մինչև հոկտեմբերի1-ը ներկայացնել ամբիոնի վարիչի կողմից անցկացվելիք, ինչպես նաև փոխադարձ դասալսումների գրաֆիկները:

ÜÆê îÆ Ü ² Ê ² ¶ ²Ð‘ **ԼՈՒԼՈՒԿՅԱՆ Ս.Վ.**

ÜÆê îÆ ø ² ð î àôÔ ² ð‘ **ՍԱՀԱԿՅԱՆ Ա. Մ.**

28.09. 2020թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ օտար լեզուների ֆակուլտետի խորհրդի
26.10.2020 Ã. N3 **ԱՌՑԱՆՑ** ÜÆê î Æ

1 . Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ընթացքի մասին:

2. Առցանց դասապրոցեսի վերաբերյալ :

3. Պրակտիկայի վերաբերյալ / զեկուցողներ՝ պրակտիկայի ղեկավարներ/:

4. Ընթացիկ հարցեր:

1.ԼՍԵՑԻՆ – Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ընթացքի մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- դեկան Ս. Լուլուկյանը, Ն.·.[1], Նաիրա Դալյանը, բ.գ.դ, պրոֆեսոր Թադևոսյանը:

Ռուսաց լեզվի ամբիոնի վարիչ Դալյանը հայտնեց, որ 2-րդ կուրսի մագիստրոսների հետ ունեցել է հանդիպում, այստեղ խնդիրներ չկան, 1-ին և 2-րդ կուրսեցիները նոյեմբերի10 ունենալու են հաշվետվություն: Կան վերականգնված ուսանողներ, որոնց թեմաները ճշտվում են :

Արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչ Թադևոսյանը հայտնեց, որ նոյեմբերի 3-ին ամբիոնը իրականացնելու է հաշվետվության կազմակերպում ինչպես բակալավր 4-րդ կուրսերի, այնպես էլ մագիստրոսների հետ: Հեռակա բաժնի որոշ ուսանողներ չեն միանում իրենց ղեկավարների հետ հանդիպումներին:

Դեկան Լուլուկյանը խնդրեց հետևողական լինել, տալ բանավոր զգուշացում, իսկ ուսանողների կողմից հանդիպումները մերժելու դեպքում, զգուշացումը կլինի արդեն գրավոր:

ՈՐՈՇԵՑԻՆ — (միաձայն) ընդունել ի գիտություն:

2. ԼՍԵՑԻՆ – Առցանց դասապրոցեսի վերաբերյալ :

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – դեկան Ս. Լուլուկյանը:

Ինպես արդեն հայտնի է Օտար լեզուների ֆակուլտետը իրականացնում էր դասապրոցեսը հիբրիդային ձևով, սակայն համաճարակի հետ կապված ներկայումս բոլոր կուրսերը անցել են առցանց դասապրոցեսի : Դասերը ընթանում են բնականոն հունով, դասացուցակը ֆիքսված է: Դեկան Լուլուկյանը ևս մեկ անգամ հորդորեց հետևել դասացուցակին, իսկ խնդիրների, փոփոխությունների դեպքում առցանց դասացուցակում տեղադրել փոփոխված դասի օրը, ժամը:

Լուլուկյանը նաև ներկայացրեց ֆակուլտետի «Գերմաներեն լեզու և գրականություն» բաժին 1-ին կուրս ընդունված օտարերկրացի ուսանողներին,որոնք թվով 15 են : Նախապատրաստական բաժնում կա 27 ուսանող և նրանց թիվը դեռ աճում է:

Դեկանը նաև հայտնեց ներկաներին, որ Արցախից Օտար լեզուների ֆակուլտետ են դիմել 2 ուսանող 3-րդ և 4-րդ կուրսերի դասընթացներին միանալու համար, մեկ ուսանող 1-ին կուրսին միանալու համար:

Լուլուկյանը նշեց այն կարևոր աշխատանքը, որ իրականացնում է ուսխորհուրդը: Դա ինչպես արդեն հայտնի է օգնության փաթեթավորումն է, հավաքագրումը, ինչպես նաև Արցախից ժամանած մանուկների համար կազմակերպվող դասընթացները, հանգիստը:

ՈՐՈՇԵՑԻՆ — (միաձայն) ընդունել ի գիտություն:

3. ԼՍԵՑԻՆ – Պրակտիկայի վերաբերյալ / զեկուցողներ՝ պրակտիկայի ղեկավարներ/:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – դեկան Ս. Լուլուկյանը, մ.գ.դ., պրոֆեսոր Աստվածատրյանը, մեթոդիստներ՝ Ալինա Եղիազարյան, Բելլա Այունց:

Լուլուկյանը ներկայացրեց, որ «Գերմաներեն լեզու և գրականություն» բաժնի ուսանողները անցկացնում են իրենց պրակտիկան «Փոքրիկ իշխան» կրթահամալիրում առցանց, սակայն երբ դպրոցները փակվեցին, այս կուրսը սկցեց իրականացնել պրակտիկան ՀՊՄՀ համահամալսարանական ֆակուլտետներում: Հոգեբանները և մանկավարժները նույնպես կցված են այդ դասընթացներին:

Նոյեմբերի 2-ին ժամը 10-ին տեղի է ունենալու հեռակա բաժնի 4-րդ կուրսի պրակտիկայի պաշտպանությունը:

«Ռուսաց լեզու և գրականություն», «Անգլերեն լեզու և գրականություն» բաժինների պրակտիկաները անցել են առցանց, տեղի են ունեցել սիմուլացիոն դասեր, յուրաքանչյուր ուսանող շաբաթական 3-4 անգամ դաս է տվել:

ՈՐՈՇԵՑԻՆ — (միաձայն) ընդունել ի գիտություն:

Ընթացիկ հարցեր:

4.1 ԼՍԵՑԻՆ – Արտասահմանյան գրականության ամբիոնի կողմից նախապատրաստվող միջբուհական գիտաժողովի հոդվածների ժողովածուն տպագրության երաշխավորելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – դեկան, բ.գ.թ., դոցենտ Լուլուկյանը, բ.գ.դ, պրոֆեսոր Թադևոսյանը, ամբիոնի վարիչ մ.գ.թ., պրոֆ/պ. Ա. Լալաբեգյանը, մ.գ.դ., պրոֆեսոր Աստվածատրյանը, մ.գ.դ.,պրոֆ/պ Նաիրա Դալյանը:

Գիտաժողովը տեղի կունենա 2020 թվականի նոյեմբեր ամսին:

Լուլուկյանը նկատեց, որ գիտաժողովը արդեն ավանդույթ է դարձել: Սա 14-րդ գիտաժողովն է:

ՈՐՈՇԵՑԻՆ — (միաձայն) Երաշխավորել տպագրության արտասահմանյան գրականության ամբիոնի կողմից նախապատրաստվող միջբուհական գիտաժողովի հոդվածների ժողովածուն:

4.2 ԼՍԵՑԻՆ – ԱՊՀ երկրների հումանիտար համագործակցության միջպետական հիմնադրամի կողմից սահմանված միջազգային «Звезды содружества» մրցանակին թեկնածու ներկայացնելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – բ.գ.թ., դոցենտ Լուլուկյանը, բ.գ.դ, պրոֆեսոր Թադևոսյանը, մ.գ.դ.,պրոֆ/պ Նաիրա Դալյանը:

Արտասահմանյան գրականության ամբիոնը ներկայացրել է բ.գ.թ., դոցենտ Իննա Վաչեսլավի Սարկիսյանի թեկնածությունը:

Սարկիսյանը իրականացրել է մի շարք միջոցառումներ, որոնք միտված են միջմշակութային կապերի զարգացմանը:

ՈՐՈՇԵՑԻՆ — (միաձայն) հաստատել Արտասահմանյան գրականության ամբիոնի բ.գ.թ., դոցենտ Իննա Վաչեսլավի Սարկիսյանին որպես ԱՊՀ երկրների հումանիտար համագործակցության միջպետական հիմնադրամի կողմից սահմանված միջազգային «Звезды содружества» մրցանակի թեկնածու:

ÜÆê îÆ Ü ² Ê ² ¶ ² Ð‘ **ԼՈՒԼՈՒԿՅԱՆ Ս.Վ.**

ÜÆê îÆ ø ² ð î àôÔ ² ð‘ **ՍԱՀԱԿՅԱՆ Ա. Մ.**

26.10. 2020թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ օտար լեզուների ֆակուլտետի խորհրդի

30.11. 2020թ. Թիվ 4 առցանց նիստի

1. Ֆակուլտետի 2020թ. հաշվետվության հաստատում:

2. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ընթացքի մասին / զեկուցողներ՝ ամբիոնի վարիչներ/:

3. Առցանց իրականացվող ուսումնական գործընթացի մասին:

4. Դասալսումների ամփոփում/ զեկուցողներ՝ ամբիոնի վարիչներ/:

5. Ընթացիկ հարցեր:

1.ԼՍԵՑԻՆ – Ֆակուլտետի 2020թ. հաշվետվության հաստատում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- դեկան Ս. Լուլուկյանը, Ն.·.[1], Նաիրա Դալյանը, բ.գ.դ, պրոֆեսոր Թադևոսյանը:

Դեկան Լուլուկյանը և փոխդեկան Սահակյանը ներկայացրեցին հաշվետվությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ — (միաձայն) Հաստատել օտար լեզուների ֆակուլտետի 2020 թվականի հաշվետվությունը:

2. ԼՍԵՑԻՆ – Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ընթացքի մասին:
ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – դեկան Ս. Լուլուկյանը, Ն.·.[1], Նաիրա Դալյանը, բ.գ.դ, պրոֆեսոր Թադևոսյանը, բ.գ.թ, դոցենտ Տ. Միքայելյանը :

Ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Տ. Միքայելյանը հայտնեց, որ հիմնականում բոլոր դասախոսները աշխատում ենք իրենց ուսանողների հետ ավարտական աշխատանքների և թեզերի վրա, սակայն կան որոշ դասախոսներ, որոնք պատշաճ կերպով չեն իրականացնում ղեկավարությունը: Պարոն Միքայելյանը հայտնեց ներկաներին, որ եթե դա կրի շարունակական բնույթ, ապա ղեկավարները կստանան նկատողություն: Նա նաև հայտնեց, որ պլանավորել է իրականացնել ուսանողների հետ հանդիպում, որի թեման լինելու է հենց այս հարցը:

Արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչ Ռ. Թադևոսյանը ևս ներկայացրեց իր կողմից ղեկավարվող ամբիոնում իրականացվող աշխատանքները : Նա հայտնեց, որ ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի հետ կապված հերթական հանդիպումը տեղի է ունենալու 03.12.2020թ. : Նա նաև ասաց, որ կան խնդիրներ ռուսերենի հետ կապված, այսինքն լեզվի տիրապետման հետ կապված, բայց այս հարցը կփորձեն լուծել ղեկավարների աշխատանքի շնորհիվ:

Ռուսաց լեզվի ամբիոնի վարիչ Ն. Դալյանը ներկայացրեց ամբիոնի կողմից իրականացված ավարտական աշխատանքներին նվիրված քննարկումները 26.11.2020թ., ինչպես նաև մագիստոսական թեզերին վերաբերյալ պլանավորված հանդիպումը 03.12.2020թ.: Ամբիոնի վարիչը նկատեց, որ առ այսօր մի ուսանող չի վերցրել թեմա, ամբիոնը փորձել է կապ հաստատել նրա հետ, սակայն դա չի հաջողվել: Դեկանը խնդրեց ուսանողի անուն ազգանունը ներկայացնել դեկանատ :

ՈՐՈՇԵՑԻՆ — (միաձայն) ընդունել ի գիտություն:

3. ԼՍԵՑԻՆ – Առցանց իրականացվող ուսումնական գործընթացի մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – դեկան Ս. Լուլուկյանը, Ն.·.¹, Նաիրա Դալյանը, բ.գ.դ, պրոֆեսոր Թադևոսյանը, բ.գ.թ, դոցենտ Տ. Միքայելյանը, մ .գ.թ., պրոֆ. պ/կ Լալաբեգյանը :

Դեկանը ներկայացրեց գերմանական բաժնի 1-ին կուրսում սովորող պարսիկ ուսանողների խնդիրը: Այս ուսանողները շատ վատ են միանում դասերին, բացակա են լինում, ունեն կապի խնդիրներ և դեկանը ասաց, որ խնդրել է միջազգային բաժնին բացակա ուսանողների հետ բացատրական աշխատանքներ իրականացնել, ինչպես նաև տալ խիստ նկատողություն:

Բորոր ամբիոնները իրականացնում են առցանց դասընթացը առանց խափանման : Եթե լինում են հիվանդության պատճառով բացակա դասախոսներ, ապա գործընկերները նրանց փոխարինում են, և դասերը ընթանում են բնականոն հունով:

ՈՐՈՇԵՑԻՆ — (միաձայն) ընդունել ի գիտություն:

4. ԼՍԵՑԻՆ – Դասալսումների ամփոփում/ զեկուցողներ՝ ամբիոնի վարիչներ/:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- դեկան Ս. Լուլուկյանը, Ն.·.¹, Նաիրա Դալյանը, բ.գ.դ, պրոֆեսոր Թադևոսյանը, բ.գ.թ, դոցենտ Տ. Միքայելյանը, մ .գ.թ., պրոֆ. պ/կ Լալաբեգյանը :

Ամբիոնի վարիչները հայտնեցին, որ դասալսումների իրականացվել են ըստ գրաֆիկի, դիտողությունները և նշումները տեղ են գտել համապատասխան մատյանների մեջ :
Դեկանը խնդրեց, իրականացված դասալսումների մասին կարճ հաշվետվություն տրամադրել, նշելով ուժեղ և թույլ կողմերը, բարելավման ուղիները:
ՈՐՈՇԵՑԻՆ — (միաձայն) իրականացված դասալսումների մասին ներկայացնել հաշվետվություն :

Ընթացիկ հարցեր:

5.1 ԼՍԵՑԻՆ – Միջանկյալ քննությունների մասին:
ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – դեկան Ս. Լուլուկյանը:

Ամբիոնների վարիչները նկատեցին, որ եթե տվյալ առարկայից կա բանավոր քննություն, ապա որպես կանոն միջանկյալը գրավոր է նախատեսվում: Եթե չկա, այդ դեպքում կարող է լինել ներկայացում, գրավոր/բանավոր համադրություն և այլն:

Դեկանը խնդրեց ամբիոնի վարիչներին դեկանատ ներկայացնել ամբիոնի կողմից նախատեսված միջանկյալների ձևաչափերը:

ՈՐՈՇԵՑԻՆ — (միաձայն) դեկանատ ներկայացնել ամբիոնների կողմից նախատեսված միջանկյալների ձևաչափերը:

ÜÆê î Æ Ü ² Ê ² ¶ ² Ð‘ **ԼՈՒԼՈՒԿՅԱՆ Ս.Վ.**

ÜÆê î Æ ø ² ð î àôÔ ² ð‘ **ՍԱՀԱԿՅԱՆ Ա. Մ.**

30.11. 2020թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ օտար լեզուների ֆակուլտետի խորհրդի

10.12. 2020թ. Թիվ 5 առցանց նիստի

1.Ասպիրանտների և հայցորդների ատեստավորման հարցը:

1.ԼՍԵՑԻՆ – Ասպիրանտների և հայցորդների ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- դեկան Ս. Լուլուկյանը, բ.գ.թ, դոցենտ Տ. Միքայելյանը, Ն. ·.¹, Նաիրա Դալյանը, մ.գ.թ, պրոֆ. պ/կ Ա. Լալաբեգյանը:

Ամբիոնի վարիչները ներկայացրեցին իրենց ամբիոնների՝ ասպիրանտների և հայցորդների կատարած աշխատանքները: Ասպիրանտները և հայցորդները նախապես ատեստավորվել էին համապատասխան ամբիոններում: Հաշվետվությունները ներկայացվել են դեկանին և ամբիոնի վարիչներին :

ՈՐՈՇԵՑԻՆ — (միաձայն) Ատեստավորել ներքոհիշյալ ասպիրանտներին և հայցորդներին՝

1. Լուսինե Ասատրյան – Ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասպիրանտ
2. Ստեփան Գրաբսկի – Ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասպիրանտ
3. Ալինա Պողոսյան - Ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասպիրանտ
4. Մանե Խաչիբաբյան - Ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասպիրանտ
5. Լուսինե Միրզոյան- Ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ
6. Տաթևիկ Զարգարյան- Ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ
7. Լուսինե Մաղաթյան - Ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ
8. Անահիտ Սեխպեյան –Ռուսաց լեզվի և դրա դասավանդման մեթոդիկայի ասպիրանտ

ÜÆê î Æ Ü ² Ê ² ¶ ² Ð‘ **ԼՈՒԼՈՒԿՅԱՆ Ս.Վ.**

ÜÆê î Æ ø ² ð î àôÔ ² ð‘ **ՍԱՀԱԿՅԱՆ Ա. Մ.**

10.12. 2020թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ օտար լեզուների ֆակուլտետի խորհրդի

29.12. 2020թ. Թիվ 6 առցանց նիստի

1.Միջանկյալ ստուգումների արդյունքների ամփոփում, քննաշրջանի նախապատրաստական աշխատանքներ:

2. Ամբիոնի վարիչների հաշվետվություններ/ զեկուցողներ՝ ամբիոնի վարիչներ/:

3. Հեռակա բաժնի կրթական ծրագրի դասընթացների կազմակերպման մասին:

4. Ընթացիկ հարցեր:

1.ԼՍԵՑԻՆ – Միջանկյալ ստուգումների արդյունքների ամփոփում, քննաշրջանի նախապատրաստական աշխատանքներ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- դեկան Ս. Լուլուկյանը, բ.գ.թ, դոցենտ Տ. Միքայելյանը, Ն. ·.[1], Ն.Դալյանը, մ.գ.թ, պրոֆ. պ/կ Ա. Լալաբեգյանը, բ.գ.դ., պրոֆեսոր Ռ. Թադևոսյանը:

Բոլոր ամբիոնի վարիչները հաստատեցին, որ միջանկյալները ընթացել են ըստ նախատեսված ձևաչափի, խնդիրներ չեն առաջացել : Ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնում 3 միջանկյալ տեղի է ունեցել մի փոքր ուշ՝ տեխնիկական պատճառներով :

Քննական տոմսերը անդեն իսկ կազմված են, գրագիկը պատրաստ է :

ՈՐՈՇԵՑԻՆ — (միաձայն) ընդունել ի գիտություն :

2. ԼՍԵՑԻՆ – Ամբիոնի վարիչների հաշվետվություններ/ զեկուցողներ՝ ամբիոնի վարիչներ/:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- դեկան Ս. Լուլուկյանը, բ.գ.թ, դոցենտ Տ. Միքայելյանը, Ն. ·.[1], Նաիրա Դալյանը, մ.գ.թ, պրոֆ. պ/կ Ա. Լալաբեգյանը, բ.գ.դ., պրոֆեսոր Ռ. Թադևոսյանը:

Ամբինի վարիչները ներկայացրեցին իրենց ամբիոնի կողմից իրականացված աշխատանքները, որոնք ամփոփված են հաշվետվություններում: Բոլոր ամբիոնները իրականացրել էին դասալսումներ, հրատարակել էին հոդվածներ և այլն :

ՈՐՈՇԵՑԻՆ — (միաձայն) Ընդունել ի գիտություն :

3. ԼՍԵՑԻՆ – Հեռակա բաժնի կրթական ծրագրի դասընթացների կազմակերպման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- դեկան Ս. Լուլուկյանը :

Դեկանը հայտնեց, որ դասացուցակը արդեն պատրաստ է, դասընթացները ստեղծման փուլում են :

Լուլուկյանը խնդրեց ամբիոնների վարիչներին հունվարի վերջին կազմակերպել հանդիպում հեռակա 5-րդ կուրսեցիների հետ ավարտական աշխատանքները քննարկելու համար : Ռուսաց լեզվի ամբիոնի վարիչ՝ Դալյանը նկատեց, որ իր կողմից ղեկավարվող ամբիոնը արդեն իսկ իրականացրել է հանդիպումը և հավելեց, որ այս հանդիպումները պարբերական բնույթ են կրում :

Ռուսաց լեզվի և դրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Դալյանը նաև հայտնեց իր անհանգստությունը մագիստրատուրա 2-րդ կուրսի վերականգված ուսանողուհի՝ Սյուզաննա Դարբինյանի հետ կապված, որը չի մոտեցել ամբիոն՝ թեզի հետ կապված խնդիրները լուծելու համար, բացակայում է մեթոդիկա առարկայի դասերից/ հենց առարկայի պատճառով նախորդ տարի դուրս է մնացել համալսարանից/ :

Դեկանը խնդրեց Դալյանին ներկայացել զեկուցագիր խնդրի հետ կապված :

ՈՐՈՇԵՑԻՆ — (միաձայն) ընդունել ի գիտություն :

4. Ընթացիկ հարցեր:

4.1 ԼՍԵՑԻՆ – Ռուսաստանի գիտության և մշակույթի կենտրոնի, Երևանում Մոսկվայի պետական համալսարանի և Հայաստանում Ռուսաստանի բուհերի ուսանողական ասոցիացիայի կողմից կազմակերպվող ուսանողի օրվան նվիրված միջոցառմանը մասնակցելու՝ ուսանողի առաջադրման հարց :

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- դեկան Ս. Լուլուկյանը, բ.գ.թ, դոցենտ Տ. Միքայելյանը, Ն. ·.[1], Նաիրա Դալյանը, բ.գ.դ., պրոֆեսոր Ռ. Թադևոսյանը, մ.գ.թ, պրոֆ. պ/կ Ա. Լալաբեգյանը:

Ռուսաց լեզվի ամբիոնի վարիչ Դալյանը առաջարկեց «Ռուսաց լեզու և գրականություն» բաժնի առկա համակարգի 3-րդ կուրսի ուսանողուհի՝ Սոնա Մկրտչյանի թեկնածությունը :

Արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչ Թադևոսյանը նույնպես առաջարկեց այս թեկնածությունը :

Սոնա Մկրտչյանի ՄՈԳ-ը 93.43 է :

ՈՐՈՇԵՑԻՆ — (միաձայն) Ռուսաստանի գիտության և մշակույթի կենտրոնի, Երևանում Մոսկվայի պետական համալսարանի և Հայաստանում Ռուսաստանի բուհերի ուսանողական ասոցիացիայի կողմից կազմակերպվող ուսանողի օրվան նվիրված միջոցառմանը մասնակցելու համար հաստատել Սոնա Մկրտչյանին :

ÜÆê îÆ Ü ² Ê ² ¶ ² Ð‘ **ԼՈՒԼՈՒԿՅԱՆ Ս.Վ.**

ÜÆê îÆ ø ² ð î àôÔ ² ð‘ **ՄԱՀԱԿՅԱՆ Ա. Մ.**

29.12. 2020թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ օտար լեզուների ֆակուլտետի խորհրդի

29.01. 2021թ. Թիվ 7 առցանց նիստի

1. Օտար լեզուների ֆակուլտետի 2020-21 ուս. տարվա առկա ուսուցման բակալավրիատ և մագիստրատուրա կրթական ծրագրերի առաջին կիսամյակի միջանկյալ և ամփոփիչ քննությունների արդյունքներ/ամբիոնի վարիչներ/ :

2. Մանկավարժական պրակտիկաների թղթապանակի պաշտպանության արդյունքներ /պրակտիկաների ղեկավարներ / :

3. 2020-21 ուս. տարվա 2-րդ կիսամյակի դասընթացների նախապատրաստական աշխատանքներ:

4. 2021 թվականի ընդունելության մասին:

5. Ընթացիկ հարցեր:

1.ԼՍԵՑԻՆ – Օտար լեզուների ֆակուլտետի 2020-21 ուս. տարվա առկա ուսուցման բակալավրիատ և մագիստրատուրա կրթական ծրագրերի առաջին կիսամյակի միջանկյալ և ամփոփիչ քննությունների արդյունքներ /ամբիոնի վարիչներ/:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- դեկան Ս. Լուլուկյանը, Ն. ·.[1], Ն.Դալյանը, մ.գ.թ, պրոֆ. պ/կ Ա. Լալաբեգյանը, բ.գ.դ., պրոֆեսոր Ռ. Թաղևոսյանը, ուսանող Վարդանյան Ավետը :

Դեկան Ս. Լուլուկյանը ներկայացրեց վիճակագրությունը, ըստ որի բակալավր կրթական ծրագրով ֆակուլտետում սովորում է 256 ոուսանող, որոնցից 69 ստացել են գերազանց գնահատական, 95- լավ, 52 բավարար, 40-անբավարար գնահատականներ , ընդ որում 27 ուսանող ունի 1 առարկայի պարտք, 9 ուսանող՝ 2 առարկայի պարտք, 4 ուսանող՝3 առարկայի պարտք :

Մագիստրատուրա կրթական ծրագրով սովորում է 69 ուսանող, որոնցից 56 ստացել են դրական գնահատական, 20 ուսանող ստացել է գերազանց, 22 ուսանող՝ լավ, 14ուսանող՝ բավարար:

Բոլոր ամբիոնի վարիչները հաստատեցին, որ միջանկյալները ընթացել են ըստ նախատեսված ձևաչափի, խնդիրներ չեն առաջացել:

Կիսամյակային քննությունները նույնպես անցել են ըստ սահմանված կարգի: Ամբիոնի վարիչները 1-ին կիսամյակի արդյունքները գնահատեցին բավարար:

Բոլոր ամբիոնի վարիչները անխտիր նշեցին, որ ստեղծված իրավիճակում գուգլ հարթակում աշտատանքը այլընտրանք էր և լավ հնարավորություն իրականացնելու դասերը, սակայն բոլորն էլ արտահայտեցին այն կարծիքը, որ առցանց դասավանդումը չի կարող ամբողջովին փոխարինել առերես դասավանդմանը:

Ռուսաց լեզվի և դրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Նաիրա Դալյանը ասաց, որ առցանց աշխատանքի դեպքում ինքնուրույնության աստիճանի որոշումը բարդություններ է առաջացնում :

Արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչ Ռ. Թադևոսյանը փաստեց, որ շատ ավելի հեշտ էր աշխատել արդեն իսկ ծանոթ խմբերում, քանի որ թե ուսանողներն են ճանաչում դասախոսին և դիտեն իրենց ներկայացվող պահանջները, թե դասախոսը գիտի այս խմբի ուժեղ և թույլ կողմերը : Սակայն նա նաև ասաց, որ գործադրվել են բոլոր ջանքերը առցանց դասավանդումը ըստ պատշաճի իրականացնելու համար :

Օտար լեզուների դասավանդման ամբիոնի վարիչ Ա. Լալաբեգյանը նույնպես աշխատանքը բավարար գնահատեց, նա նկատեց,որ առցանց ուսուցման ընթացքում նկատել է թե դրական միտումներ, թե թերություններ, որոնք սակայն չեն ազդել ընդհանուր աշխատանքի վրա :

Ուսանող Ավետ Վարդանյանը փաստեց, որ 2020-2021 թվականի 1-ին կիսամյակի առցանց դասավանդումը ավելի լավ էր կազմակերպված և իրականանում քան 2019-2020թ ուստարվա 2-րդ կիսամյակը : Ուսանողը այս հանգամանքը բացատրում է ավելի մեծ փորձով և ուսանողների կողմից գործիքներին տիրապետելով: Տեխնիկապես էլ թե դասախոսները թե ուսանողները ավելի լավ էին զինված :

ՈՐՈՇԵՑԻՆ — (միաձայն) ընդունել ի գիտություն :

2. ԼՍԵՑԻՆ – Մանկավարժական պրակտիկաների թղթապանակի պաշտպանության արդյունքներ /պրակտիկաների ղեկավարներ / :

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- դեկան Ս. Լուլուկյանը, Ն. ·.[1], Նաիրա Դալյանը, Անի Մանուկյանը, Ավետ Վարդանյանը:

Ռուսաց լեզվի և դրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Նաիրա Դալյանը ներկայացրեց իր կողմից ղեկավարվող ամբիոնի պրակտիկայի պաշտպանության արդյունները : Նա փաստեց, որ պրակտիկան անցել է շատ ակտիվ, չնայած այն հանգամանքին, որ այն անցել է առցանց, մեթոդիստները դասերից առաջ և հետո անցկացրել են քննարկումներ, Է. Բայաթյանը նույնիսկ հավելյալ ժամեր է պարապել, քանի որ, ըստ մեթոդիստների, ռուսաց լեզվի դասավանդման մեթոդիկային տրամադրվող ժամերը բավարար չեն լիովին ներկայացնելու համար նյութը : Քննությունից առաջ ուսանողներին տրվել է հարցաշար, որին էլ պատասխանել են ուսանողները իրենց ակտիվ պրակտիկայի հաշվետվությունը ներկայացնելուց հետո :

Սրբուհի Լուլուկյանը նույնպես փաստեց, որ գերմանական բաժնում պրակտիկան ընթացել է լավ, սակայն նա նշեց, որ հենց պրակտիկան է ամենից շատը տուժել համաճարակի հետ կապված, քանի որ ոչ բոլոր դպրոցներն են համաձայնվել ընդունել ուսանողներին : Այս

առումով գերմանական բաժինը խնդիրներ չի ունեցել, հաշվի առնելով ուսանողների քանակը :

Անի Մանուկյանը նույպես ներկայացրեց, իր կողմից իրականացված աշխատանքը, նա տեղեկացրեց, որ դասերը անցկացվել են ժամանակակից ուսուցման մեթոդներին համահունչ, նաև նա նկատեց, որ առցանց ուսուցումը թույլ է տվել ուսանողներին բարելավելու իրենց գիտելիքները և հմտությունները հենց առցանց դասավանդման տիրույթում, ինչը շատ կարևոր է ժամանակակից ուսուցչի համար :

Ավետ Վարդանյանը խոսեց թղթապանակները առցանց լրացնելու մասին և ասաց, որ այս մոտեցումը շատ ավելի հարմար է ուսանողների համար քանի որ կարիք չկա այդքան էջեր տպելու և խնդրեց, հնարավորության դեպքում նույնիսկ առերես պրակտիկայի ժամանակ կիրառել հենց առցանց թղթապանակներ, ինչը կխնայի ուսանողների գումարները:

ՈՐՈՇԵՑԻՆ — (միաձայն) Ընդունել ի գիտություն:

3. ԼՍԵՑԻՆ -2020-21 ուս. տարվա 2-րդ կիսամյակի դասընթացների նախապատրաստական աշխատանքներ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- դեկան Ս. Լուլուկյանը, Ն. ·.[1], Ն.Դալյանը, մ.գ.թ, պրոֆ. պ/կ Ա. Լալաբեգյանը, բ.գ.դ., պրոֆեսոր Ռ. Թադևոսյանը, փոխդեկան Ա. Ասատրյանը, ռուսաց լեզու և գրականության բաժնի պատասխանատու Ս.Հարությունյանը:

Դեկանը հայտնեց, որ դասացուցակը արդեն պատրաստ է :

Ռուսաց լեզու և գրականության պատասխանատու Ս. Հարությունյանը ներկայացրեց ռուսաց լեզու և գրականություն բաժնի ուսանողների խնդրանքը առ այն, որ դասերը շարունակեն առցանց լինել, քանի որ ուսանողների մեծ մասը շրջաններից է, մյուս մասն էլ Ափյուռքից :

Արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչ Ռ. Թադևոսյանը նույնպես նշեց, որ ցանկալի է դեռ դասերը շարունակել առցանց :

Ռուսաց լեզվի և դրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Նաիրա Դալյանը նկատեց, որ առնվազն պրակտիկումը պետք է կազմակերպել առերես, քանի որ լեզուն ավելի հեշտ կարելի է սովորել առերես շփման ժամանակ:

Օտար լեզուների դասավանդման ամբիոնի վարիչ Լալաբեգյանը նկատեց, որ ԲՈՒՀ-ը կամ պետք է առցանց աշխատի, կամ առերես, քանի որ համահամալսարանական ամբիոնների համար շատ մեծ դժվարություն է ներկայացնում հիբրիդային դասավանդումը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործում են 10 ֆակուլտետներ, որոնց դասացուցակները գրեթե անհնար է կազրավորել եթե չլինի ընդհանուր մետոցում :

Լուլուկյանը և Ասատրյանը խնդրեցին երկուշաբթի օրը մոտենալ դեկանատ դասացուցակի համար:

ՈՐՈՇԵՑԻՆ — (միաձայն) ընդունել ի գիտություն :

4. ԼՍԵՑԻՆ – 2021 թվականի ընդունելության մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- դեկան Ս. Լուլուկյանը, Ն. ·.[1], Նաիրա Դալյանը, բ.գ.դ., պրոֆեսոր Ռ. Թադևոսյանը, մ.գ.թ, պրոֆ. պ/կ Ա. Լալաբեգյանը:

Դեկան Լուլուկյանը նշեց ընդունելության հետ կապված հարցի կարևորությունը: Նա ասաց, որ ամբիոնները արդեն իսկ ներկայացրել են դիմորդների ցանկերը: Նա խնդրեց ամբիոնի վարիչներին ամեն շաբաթ թարմ տեղեկություն տրամադրել այս հարցի հետ կապվա :

Օտար լեզուների ֆակուլտետի բաց դռների օրը տեղի է ունենալու մարտի 26-ին: Դեկանը խնդրեց մտացել կազմակերպչական մի շարք հարցերի շուրջ:

Ուսխորհրդի հետ հանդիպումը տեղի է ունենալու երեքշաբթի օրը, որտեղ կհստակեցվեն մի շարք հարցեր:

Դասախոսները և ուսանողները առաջարկեցին մի շարք քայլեր, օրինակ՝ կարճ հոլովակի ստեղծում, որը կպատմի հենց ֆակուլտետի մասին, ուսանողների կողմից տեսաձայնագրությունների տեղադրում համացանցում, արդեն իսկ եղած հոլովակների կիրառում նույն հարթակներում և այլն :

ՈՐՈՇԵՑԻՆ — (միաձայն) ամեն շաբաթ տալ թարմացված տեղեկատվություն ընդունելության հետ կապված: Ներկայացնել առաջարկներ բաց դռների օրը կազմակերպելու վերաբերյալ:

5.Ընթացիկ հարցեր:

5.1 ԼՍԵՑԻՆ – ռուսաց լեզվի և դրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս Ն. Բելովայի աշխատանքից ազատման հետևանքով որոշ ուսանողների ավարտական աշխատանքների, դիպլոմային աշխատանքների և մագիստրոսական թեզերի նոր ղեկավարներ նշանակելու և թեմաների հստակեցման և վերահաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- դեկան Ս. Լուլուկյանը, Ն. ·.[1], Նաիրա Դալյանը, բ.գ.դ., պրոֆեսոր Ռ. Թադևոսյանը:

Ռուսաց լեզվի և դրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Նաիրա Դալյանը ներկայացրեց հետևյալ փոփոխությունները՝

ԱԲ - 4 –րդ կուրս / ռուսաց լեզու և գրականություն				
Ուսանողի ազգանուն, անուն	**Հին թեմա**	**Հին ղեկավար**	**Փոփոխված թեմա**	**Ղեկավար**
